ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Զերդ Սրբություն.

Այս միջոցին, երբ մենք տոնախմբում ենք Ծնունդը և Հայտնությունը Տիրոջ Բանին, որ մարդացավ վասն մերո փրկության, շնորհավորում ենք Զերդ Սրբությունը, մեր շնորհավորանքների հետ հայտնում Զեզ շնորհակալություն այն սրտագին բարեմաղթանքների համար, որ մեզ հղել էիք:

Աստվածորդու գալուստը մարդկանց մեջ եղավ մեծագույն հայտնությունը Աստծո ունեցած սիրույն դեպի մարդկությունը: Մեր աղոթքներով կմիանանք Զերդ Սրբության հետ, որ սերն ու խաղաղությունը Երկնավոր Մանկան սփռվի ամբողջ աշխարհի վրա, որպեսզի մարդիկ հաշտվեն Աստծո և իրար հետ՝ նրա միջոցով, որովհետև նա է մեր խաղաղությունն ու հաշտությունը (Եփես. Բ 14—16):

Ի Քրիստոս եղբայրական սիրո վերանորոգ արտահայտությամբ՝

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

ՎԱՏԻԿԱՆ

*
* *

Զերդ Սրբություն.

Եկեղեցու հավատացյալ ժողովրդի հետ գնանք դեպի Բեթղեհեմ՝ երկրպագելու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին, մատուցենք մեր սրտի երկրպագությունը, մեր սերը՝ միմյանց նկատմամբ, և մեր անկեղծ իղձերը՝ միության:

---

* Տե՛ս նախորդ համարի 8-րդ էջը:

Սուրբ Ծննդյան այս մեծ տոնի առիթով սրտագին ողջունում ենք Ձերդ Սրբությանը և Իր հավատացյալ հոտին, որպեսզի մարդացյալ Փրկիչը առատորեն պարգևի իր օրհնություններն ու շնորհները ձեր սուրբ եկեղեցուն, Ձերդ Սրբությանը և ձեր հավատացյալ ժողովրդին:

Սեր Տիրոջ օրհնությամբ լի նոր և խաղաղ տարի Ձեզ և համայն աշխարհին:

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ
Տիեզերական պատրիարք հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

*
* *

Ձերդ Սրբություն.

Եղբայրական սիրո և հոգեկան ուրախության զգացումով ողջունում եմ Ձերդ Սրբությունը Քրիստոսի Ծննդյան տոնի առիթով:

Թող օրհնե մեզ նորածին Աստվածը և Փրկիչը մեր, պտղաբերի մեր ծառայությունը իր սուրբ եկեղեցուն և գալիք նոր տարում պարգևի ամենքիս իր բարիքները ու բոլոր ժողովուրդներին բաշխի խաղաղություն:

Ձերդ Սրբության նվիրյալ ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

*
* *

Ձերդ Սրբություն.

Եղբայրական ջերմ շնորհակալություն Ձեր շնորհավորանքների համար՝ Նոր տարվա և Փրկչի ս. Ծննդյան տոների առիթով:

Մարմնացյալ Տերը թող խաղաղություն պարգևի աշխարհին և միություն իր եկեղեցուն: Այս առիթով ցանկանում ենք, որ մեր սիրո և եղբայրության կապերը Է՛լ ավելի ամրապնդվեն, Աստուծո փառքի համար:

Ձերդ Սրբության ի Քրիստոս եղբայր՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ
Պատրիարք Ալեքսանդրիայի

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

*
* *

Մարդացյալ Փրկչի Ծննդյան տոնի առթիվ եղբայրական սիրով լցված շնորհավորում ենք Ձերդ Սրբությունը ամբողջ սրտով՝ մաղթելով Ձեզ առողջություն, հոգեկան բերկրանք և բազում հոգևոր ուրախություններ: Թող աշխարհը լցվի երկնային խաղաղության օրհնությամբ:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ
Պատրիարք հունաց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*
* *

Զերդ Սրբություն.

Սուրբ Ծննդյան և Նոր տարվա տոների մոտալուտ գալուստը երջանիկ պատեհություն է ընծայում ինձ՝ եղբայրաբար ողջունելու Զեզ և արտահայտելու այն միևնույն բարեմաղթությունները, որոնք այս օրերին ինքնաբերաբար բխում են եկեղեցու պատասխանատու բոլոր անձանց սրտերից և որոնք արտացոլում են այն մաղթանքները, որ երկինքն ինքն ուղղեց երկրին մեր Փրկիչ և Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան օրը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Թող «Մանուկն երկնային, որ էր յառաջ քան զլինելն աշխարհի», ինչպես երգվում է մեր սուրբ պատարագում, իր երկնային շնորհներն առատապես բաշխի Զեզ և Քրիստոսի սիրեցյալ հոտի մեկ մասի հովվության Զեր առաքելության մեջ օգնի Զեզ և մեր բոլորի առաջ հերթի փոխըմբռնման ու միության ճանապարհը:

Երջանիկ եմ զգում ինձ՝ այս առթիվ վերանորոգելու իմ եղբայրական այն բարի մաղթանքները, որոնք անձամբ Զերդ Սրբությանը հղելու առիթը տրվեց ինձ Մոնրեալի օդանավակայանում:

ՄԱՔՍԻՄՈՍ Ե
Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

*
* *

Զերդ Սրբություն.

Շնորհակալ ենք Զերդ Սրբության արժեքավոր այն պատգամի համար, որ ուղարկել էիք Տիրոջ Ծննդյան տոնախմբության առիթով: Խորապես հավատում ենք, որ այն հրաշալի օրերին Բեթղեհեմում ծնված սուրբ Մանուկը՝ Փրկիչն ու Լույսն է աշխարհի և Խաղաղության Իշխանը: Կհուսանք, որ նա առաջնորդելու է ներկա աշխարհը խավարից դեպի լույսի և խաղաղության ճշմարիտ ճանապարհը:

Երբ շնորհավորում ենք Զերդ Սրբությանը այս երջանիկ առիթով, խընդրում ենք Մարմնացյալ Աստծուն օրհնելու Զերդ Սրբությունը իր առատ ուրախությամբ և շնորհելու Զեզ առողջություն և հաջողություն:

Ի Քրիստոս Զերդ՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ
Սիրիայի օրթոդոքս եկեղեցու
և համայն Արևելքի պատրիարք

ԴԱՄԱՍԿՈՍ

*
* *

Զերդ Սրբություն.

Այսօր Բեթղեհեմի այրում մարմին առավ աշխարհի Փրկիչը Քրիստոս և մեկ անգամ ևս աշխարհում հնչեց այնքան բաղձալի հրեշտակների օրհներգությունը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Աղոթում ենք, որ մարդացյալն Աստված շարունակի ոգևորել և պաշտպան կանգնել մեր բոլոր գործերում՝ իր անվան ու փառքի համար:

ԲԱՍԻԼԻՈՍ
Պատրիարք եթովպական եկեղեցու

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ

*
* *

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»

Աստված իր Որդուն ուղարկեց փրկելու աշխարհը:

Քրիստոսի վարդապետությունը մարդկանց մեջ սերմանում է սեր և խաղաղություն և ժխտում ամենայն բռնություն և պատերազմ:

Աղոթենք առ Աստված, որ այսուհետև ևս աշխարհը զերծ մնա բռնություններից և պատերազմներից և մեր Փրկիչը պարգևի իր աստվածային սերը և խաղաղությունը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԵՓՐԵՄ Բ
Կաթողիկոս-պատրիարք համայն Վրաստանի

ԹԲԻԼԻՍԻ

*
* *

Զերդ Սրբություն.

Քրիստոսի ս. Ծննդյան ուրախությունը լուսավորում է մեր հոգիների մեջ մեծ հույսը, թե Աստված իր անսահման սերը ցույց տվեց աշխարհին և մարդկությանը:

Այս խոհերով ցանկանում ենք ձեզ կատարյալ քաջառողջություն և հոգևոր ուրախություններ: Թող նոր տարին լինի խաղաղության, եղբայրության և բարօրության տարի:

Եղբայրական սիրո ողջագուրումով՝

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

*
* *

Զերդ Սրբություն.

Սրտագին ողջունում ենք Ձեզ Քրիստոսի Ծննդյան լուսաշող տոնի առթիվ և մաղթում Ձեզ, ձեր եկեղեցու հոգևոր դասին և հավատացյալ հոտին քաջառողջություն, խաղաղություն և բարօրություն նոր՝ 1969 տարում:

Աղոթող ենք առ Աստված, որն ի սեր իր իսկ ձեռքով ստեղծված աշխարհին, ուղարկեց իր Որդուն, որպեսզի նա բազմապատկի բարի կամքի տեր մարդկանց թիվը աշխարհում և ստեղծի միասնություն ի Քրիստոս աշխարհի բոլոր ծայրերում:

Զերդ Սրբության նվիրյալ ի Քրիստոս եղբայր՝

ԿԻՐԻԼ
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

ՄՄ. ԳՐԱԴԱՐԱՆ

*
* *

Ձերդ Սրբություն.

«Քրիստոս ծնաւ ի Բեթղեհեմ»:

Հրեշտակների պատգամը միանգամայն թարմացած հնչում է աշխարհով մեկ, երբ մոտենում է մեր Տիրոջ Ծննդյան տոնը: «Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհեմ և տեսցուք զի՛նչ է բանս, զոր Տէր եցոյց մեզ»:

Այդ գիշեր Բեթղեհեմում համեստ հովիվները և ապա աշխարհի բոլոր քրիստոնյաները շտապեցին դեպի մսուր, երկրպագելու Մանուկ Թագավորին: Նա անօգնական պառկել էր մսուրի մեջ, թեև նա աշխարհի Փրկիչն էր: Նա Խաղաղության Իշխանն էր, ծնված մի աշխարհում, որը պառակտված էր մարդու չար հակումներով:

Բազում դարեր են անցել Ծննդյան օրերից, բայց աշխարհը դեռևս ուշադրությո՛ն չի դարձնում Մարմնացյալ Տիրոջ կողմից եղած փրկության պատգամին: Ժողովուրդ ժողովրդի դեմ է կռվում, և գաղթականներ խույս են տալիս իրենց տներից, որովհետև «ոչ գոյ տեղի յիջևանի»:

Երբ հիշում ենք Տիրոջ ս. Ծնունդը, դառնանք դեպի նորածին Փրկիչը գոհությամբ և ապաշխարո՛ւթյամբ և աղոթենք, որ նա՝ աշխարհի Լույսը, չքացնի խավարի գործերը և վերածնվի մեր սրտերում և ամենուրեք, սրտերում բոլոր մարդկանց:

Միացած Ձեզ հետ սուրբ Տիրամոր և ամենայն սրբոց բարեխոսությամբ աղոթում ենք, որ նա առատապես օրհնե Ձեզ, սիրելի եղբայր իմ, ձեր եկեղեցու բոլոր հոգևորականներին, հավատացյալներին և լիացնե Ձեզ հավատքի սիրով, ուրախությամբ և խաղաղությամբ:

Եղբայրական սիրով և ողջունիվ, մնամ Ձեր սիրելի եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻ
Արքեպիսկոպոս Քենտրբերիի, եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ համայն Անգլիայի

ԼՈՆԴՈՆ

*
* *

Ձերդ Սրբություն.

Ամենասրտագին շնորհավորանքներ Ձերդ Սրբության՝ Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ:

Մենք հավատում ենք, որ Երկնային Թագավորը միշտ մեզ հետ է, և որ նա խաղաղություն ու հաճություն պիտի ս՛արգևի ամբողջ աշխարհին և բարի կամքի տեր մարդկանց:

Մեր հոգևոր դասի ու հավատացյալների կողմից ամբողջ հոգով մաղթում ենք Ձերդ Սրբության՝ աստվածային ամենայն բարիքներ նոր՝ 1969 տարում:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՍՏԵՓԱՆ
Միտրոպոլիտ Վարշավայի և համայն Լեհաստանի

ՎԱՐՇԱՎԱ

*
* *

Հաճեցեք ընդունիլ եղբայրական մեր լավագույն մաղթանքները՝ Նոր տարվո և սուրբ Ծննդյան առթիվ:

Մեր ջերմ աղոթքն է, որ Աստուծո Որդվույն Ծննդյան միջոցին հրեշտակներուն ավետած խաղաղությունը տարածվի համայն աշխարհի վրա և ազատե մարդկությունը պատերազմի մղձավանջեն՝ անդորրությունն պարգևելով տիեզերքի բոլոր բնակիչներուն:

Վստահ ենք, որ այսպիսի մթնոլորտի մեջ մեր սիրելի հայրենիքը ուրախությունը պիտի ունենա ավելի ևս զարգանալու, հառաջդիմելու և իր գավակները երջանկացնելու:

Իսկ եկեղեցին շատ ավելի հեշտ կերպով պիտի տարածեր իր մայրական հոգածությունը տառապյալ մարդկության վրա, լուսավորելով մտքերը հավատքի ճշմարտություններով, զորացնելով կամքերը Աստուծո շնորհներով և ամոքելով վշտացյալ սրտերը:

Հայցելով Աստուծմե Վեհափառ Տերությանդ համար երջանիկ տարիներ, կատարյալ առողջությամբ և առաքելական գործոց հաջողությամբ, մնամք եղբայրական սիրո ջերմ ողջունիվ և հարգանոք,

Ձերդ աղոթակից՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԷ ՊԱՊԱՆՅԱՆ
Պատրիարք կաթողիկե հայոց

ԲԵՅՐՈՒԹ

*
* *

Ձերդ Սրբություն.

Երախտագիտությամբ և սիրով ողջունում ենք Ծնունդն ու Աստվածահայտնությունը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և շնորհակալ ենք Աստծուց, որ անսպառ բարությամբ ուղարկեց իր Միածնին աշխարհ, որպեսզի նախահոր անեծքից փրկի մեզ:

Սրտեռանդ աղոթում ենք Մարդացյալ Փրկչին՝ շնորհելու Ձեզ քաջառողջություն և օրհնելու Ձեր հոգևոր գործերն ու ջանքերը՝ ի բարօրություն եկեղեցու, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Ձերդ Սրբության սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ
Արքեպիսկոպոս Կիպրոսի

ՆԻԿՈՍԻԱ

*
* *

Ձերդ Սրբություն.

Նոր տարվա հանդիսությունների առթիվ ներկայացնում ենք Մեր եղբայրական մաղթանքները՝ Ձերդ Սրբության երջանկության, գործոց հաջողության և մեր սիրեցյալ ժողովրդի բարօրության համար:

Փա՜ռք մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին և խաղաղություն աշխարհին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

*
* *

Թող մեր Փրկչի լույսը շողա ամբողջ տարին Ձեր եկեղեցու մեջ և հավատացյալների հոգում այժմ և միշտ:

ԲԼԵՑԿ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար

ԺՆԵՎ

*
* *

Գոհություն Աստծո՝ Նոր տարվա և ս. Ծննդյան տոների առթիվ իր առատ օրհնությունների համար: Մենք՝ ֆրանչիսկյաններս, ուրախությամբ կվերհիշենք Ձերդ Սրբության այցը մեր Փրկչի ծննդյան վայրը:

Դարձյալ կվերանորոգենք ամենաանկեղծ մաղթանքները այս տոների առթիվ, խնդրելով Բեթղեհեմի Մանուկից՝ իր Հայտնության տոնի առթիվ, իր շնորհները բաշխելու Ձերդ Սրբության և ձեր հավատացյալների վրա: Թող խաղաղության պատգամը թափանցի մարդկանց սրտերից ներս՝ ամենուրեք:

Թո՛ղ Մանուկն Քրիստոս պարգևի աշխարհին իր ծննդյան շնորհը, որ սերն է, և շունչը իր Ծննդյան, որ խաղաղությունն է:

ԷՄԻՆ ՌՈՆՍԱՐԻ
Կուստոդ ս. Երկրի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*
* *

Ձերդ Սրբություն.

Մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի Ծննդյան տոնի առիթով ուրախությունն ու հաճույքն ունինք Ձերդ Սրբության և ձեր առաքելական հովվապետության հանձնված հոգին հղելու մեր Տիրոջ՝ Քրիստոսի անունով ջերմագին մաղթանքներ, Իմ, եպիսկոպոսների, քահանաների և Կանադայի անգլիկան եկեղեցու հավատացյալ ժողովրդի կողմից:

Մեր ջերմագին աղոթքն է, որ այս հասարակաց օրհնյալ տոնախմբությունը լցնի ոչ միայն մեր օրերը խաղաղությամբ ու երջանկությամբ, այլ նաև լինի հուսադրիչ առիթը դեպի մեր Տերը Հիսուս Քրիստոսով՝ սիրո, եղբայրության և միության, որպեսզի նրա անունով արժանի լինենք դառնալու քարոզիչները խաղաղության և համաձայնության, մաքառումներով լի այս աշխարհի վրա:

Ձեր հավատարիմ եղբայրը ի Քրիստոս՝

ՀՈՎԱՐԴ Հ. ԿԼԱՐԿ
Կանադայի անգլիկան եկեղեցու արքեպիսկոպոս

ՏՈՐՈՆՏՈ

*
* *

Ձերդ Սրբություն.

Հաճույքն ունեմ սույն գրության կից Ձեզ փոխանցելու Նորին Սրբություն Պավղոս Զ պապի նամակը:

Երջանիկ եմ զգում ինձ, որ օգտվելով այս առիթից, հնարավորություն եմ ունենում վերստին արտահայտելու Ձերդ Սրբությանը իմ լավագույն բարեմաղթությունները այս նոր տարվա սկզբին և խնդրելու, որ ընդունեք իմ հարգալիր զգացմունքների արտահայտությունը ի Քրիստոս:

Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԲՐԱՆԴՍ
Քարտուղար Քրիստոնեական եկեղեցիների միության դիվանի

ՎԱՏԻԿԱՆ

*
* *

Ձերդ Սրբություն.

Ի խորոց սրտի ողջունում եմ Ձերդ Սրբությունը՝ մեր Տիրոջ Ծննդյան տոնի առիթով: Ձեզ հետ միասին ուրախանում ենք Տիրոջ ուրախությամբ, երգում ս. հրեշտակների երգը՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Այս երգը թող լինի մեր ամբողջական ու կատարյալ ընդհանուր ուրախությունը, քանզի աստվածային ուրախությունն՝ է՛ մեր հոգևոր զորությունը:

Ի սրտե շնորհակալ եմ Ձերդ Սրբության Իր սիրալիր ուղերձի համար:

Սիրով ի Քրիստոս՝՝

ԱԼՖՐԵԴ ՏՈՒՄԻՆԳ
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս

ՏԱԼԼԻՆ

*
* *

Վեհափառ Տեր.

Հիսուսի հրաշափառ Ծննդյան տոնին և Ամանորի նվիրական առիթներով կու գամ սրտագին շնորհավորություններ ներկայացնել Վեհափառ Տերությանդ միաբանությանս բոլոր անդամներուն կողմե, ամենաջերմ մաղթանքներով և լավագույն իղձերով:

Աղոթող ենք, որ Արդարության Արեգակին պայծառ լույսը հավետ շողա ս. Էջմիածնի հինավուրց գմբեթներուն տակ և լուսակերպե հայ ժողովուրդն համայն, հայրենիքի սահմաններուն մեջ և ի սփյուռս աշխարհի, ու մանավանդ մխիթարե զամենքը:

Մեր բուռն փափագն է, որ խաղաղության ծիածանը տարածվի աշխարհե աշխարհ, մանավանդ 1969 թվականի ընթացքին, բոլոր բարյացակամ մարդոց տենդագին ջանքերով, ու Բեթղեհեմի շնորհաբեր աստղը ծագի վերստին՝ ավետելու՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այս զգացումներով կմաղթենք Վեհափառ Տերությանդ արևշատ տարիներ, քաջառողջ կյանք, երջանիկ ու խաղաղ գահակալությամբ և շինարար գործունեությամբ՝ «ընդ երկայն աւուրս» հովվելու ժողովուրդն հայոց, ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո և ի փառս սրբո Միածնին:

Ամենախորին մեծարանքով Վեհափառ Տերությանդ խոնարհ ծառա՝

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ
Ընդհ. աբբահայր Մխիթարյան միաբանության

ՎԵՆԵՏԻԿ